

ւիննալ էին յերկրորդ նեոն իւրեանց յՆդիադարն, եւ ամենեքեան առին սակաւ գհագրեցումն իւրեանց, եւ Պատրիարքըն (Նդիադար) սկսաւ սակաւ ինչ նեղացնել զմեզ, զի ժամանակ մեր հրաւիրեաց զմեզ սակս Իզմիրու առաջնորդութեան թէ ԵՃ (500) զուրուշ բեր քեզ վրայ պարաք (կոնդակ) անեմ զնա նիստ. եւ կամ ի Մարզուան, եւ կամ Յանկիւրիայ, եւ մեք յամենեցունց հրաժարեցաք: Բազում այլ եւ այլ անասելի զործս հրաւիրեաց զմեզ զի յերկարելն ձանձրութիւն է սուրբ հօրդ, եւ յետոյ կամէր զմեզ ի մէջ փորձանաց ձգել, այսպէս ասելով՝ եւ ընդ իս միաբանիր, զու նիստ ի տեղս փոխանորդ ինձ եւ ես մընամ ի վերայ աշխարհի շրջիմ պարտուցս օգնութեան համար, եւ ի սմանէ եւս զերծաք աղօթիւք սուրբ հօրդ, եւ այլ իմն կերպիւ պատերազմեցաւ թէ ինձ Բ(Զ) քիսա (քսակ) ստակ փոխ տուր, եւ թէ չունիս զգրեանք եւ զգեստ գրաւեա առ եւ տուր: Եւ մեք տարակուսեալ մնացաք թէ որպէս ազատիմք ի նմանէ եւ լուաք զգալուստ վեհիդ՝ եւ զՄարտիրոս վարդապետին (Ղրիմցին է), ուրախացեալ բերկրեցաք հոգեով եւ մարմնով, զի յուսահատելոյս եւ միայն մնացելոյս օգնական ժամանելոց է, եւ յետոյ ասացին թէ՛ վեհն զՋատիկն յԵրզուրում առնելոց է, եւ Մարտիրոս վարդապետն ի Թօխաթ, յորժամ զայս լսեցաք ելեալ դիմեցաք ի Թօխաթ զի Մարտիրոս վարդապետն չուտով առեալ տարայց, եւ եկաք մինչեւ ի Պօլիս, ասացին թէ հանդերձ բազում վարդապետօք վեհն զնաց Թօխաթու ի Յանկիւրիա, եւ մեք դիւրեցաք զճանապարհն զնացաք ի Յանկիւրիա, եւ տեսաք զՊօղոս վարդապետն ի տեղն, ասացաք թէ Ջատիկն ի տեղս ես առնելոց: Մինաս վարդապետն Ղօնիա էր զնացեր, եւ մեք կամեցաք ի քաղաքն մտանել վասն պարտուցն մերոյ զի ՃԾ (150), զուրուշ պարտք ունիմք, ճշմարտութեան ինքն Քրիստոս վկայէ, զի յորժամ բաժանեցաք ի սուրբ հօրէդ մէկ ստակ ի յայլ տեղ ժողով չեմ արարեալ, այլ զամենայն ինչ թէ հանդերձ՝ եւ թէ մեզ կերակուր պարտօք է եղեր՝ քանզի

ի Ստամպօլ ոչ մի ստակ կերակուր մեզ ոչ տուին, ոչ թէ մեզ, այլ եւ ամէն սեւապլխացն ի սպառ հատին զողորմութիւն եւ զկերակուրն, այլ ոչ ընդունելով ի քաղաքն ժամ մի, այլ ի յետս դարձաք ի վանքն, Գ(Յ) չարաթ ի տեղն մնացաք զիտելով զալտեան սուրբ հօրդ, եւ յաւուր միոյ եկին երկու մուրացիկ ի Թօխաթու, նոքա երգմամբ հաստատեցին թէ հոգեւոր տէրն ի Ստամպօլ զնաց եւ մեք վասն պակասութեան իրի զնացաք ի քաղաքն, սակաւ ինչ նստեցաք ի սուրբ Գառասունքն քահանայքն այն օրն ժամ չասացին թէ վարդապետ չի լինի թէ եկեղեցին մտանես, այն օրն առանց ժամի մնաց ժողովուրդն, պատճառ այս բանիս զԳրիգոր երէցն եւ ոչ Գասպար երէցն եւ երեցիտիսանն: Հրամանքդ ի Թօխաթ մեզ նեղացար թէ յարեղայ անուամբ շրջէիր, քեզ հաց չէին տար, ահա հրամանուց կոնդակովն վարդապետին անուամբ զընացաք յեկեղեցին եւս շթողին, մեք այլ զնացաք ի դատու (մահմետական դատաւոր), ասացաք թէ մօլէն յորժամ ի քաղաքն ինչ մտանէ նորա իջեւանքն ինչ տեղ է, ասաց թէ մէջիտն (մզկիթն) է, եւ հայոց եկեղեցին, մեզի մէկ լաւ փաթուա (վճիռ) տուաւ, եւ մեք տարաք զայն հուքաք (վաւերացում) եւս արարաք որ հուքաքիւ կեօրէ (վաւերացման համաձայն) Էմր (հրաման) առնեմք, եւ ապա յատ այնպիսեացն խօսիմք թէ հրամանքս զնոսս սատիւ կու խրատես բարի է, ապա թէ ոչ՝ այլ կերպիւ զնոսս խարտող կայ, որ այլ սեւապլխի այնպէս չի առնեն: Գարբիէլ վարդապետն եւս արարեալ են այնպէս, եւ մեք կամեցաք զնոսս ընդ բանիւ առնել, այլ հրամանացրդ զալտեան սպասեցաք, զի զնոսս խրատեսցես, եւ յուզի անկեալ զնացաք մինչ ի Իզմիրիա, ի տեղս ասացին թէ հոգեւոր տէրն է Թօխաթ է մնացեր, եւ Մարտիրոս վարդապետն ի Ստամպօլ զնաց, եւ մեք տարակուսեալ մնացաք, զի զուր եղեւ այսչափ աշխատանքն մեր վասն երթեւեկութեան ճանապարհին եւ ստակ խարճելոյն, ոչ զիտելով թէ զինչ առնիցեմք, ահա աղօթիւք սուրբ հօրդ կամիմք ի ներս մտանել, թէ զորոյ ինչ